ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լևոն Անդրանիկի Քոչարյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գյուղատնտեսության ոլորտը Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն բնագավառներից է ոչ միայն երկրի սոցիալ – տնտեսական և ժողովրդագրական նշանակության առումով, այլև ներկա աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում՝ սեփական ռեսուրսների հաշվին պարենային անվտանգության խնդիրների լուծման տեսանկյունից: Գյուղատնտեսության բնագավառի պաշտպանության, ֆինանսական կայունության և զարգացվածության բարձր մակարդակի ապահովումը պետական կարևորագույն գերխնդիրներից մեկն է, քանի որ պարենային անվտանգության, սոցիալ-տնտեսական նշանակության, զբաղվածության մակարդակի, ՀՆԱ-ում դրա տեսակարար կշռի և ազդեցության չափի առումով այն առաջնային ուշադրության կարիք ունի:

Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և գյուղացիական տնտեսություններ վարելու տեսանկյունից Հայաստանի Հանրապետության տարածքն աչքի է ընկնում բարձր ռիսկայնությամբ: Զանազան բնական աղետների (կարկուտ, երաշտ, ցրտահարություն և այլն) և անկանխատեսելի պատահարների հետևանքով զգալի կորուստներ են կրում մի շարք գյուղաբնակներ: Նշված պատահարների արդյունքում գյուղատնտեսական արտադրանքի կորուստը յուրաքանչյուր տարի զգալի մեծություն է կազմում: Հարկ է նկատել, որ տարերային աղետների կառավարման և դրանցից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցելու ուղղությամբ (հակակարկտային կայանների, կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, հետաղետային օգնությունների տրամադրում և այլն) ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումները բավարար արդյունավետություն չեն ապահովել և անհրաժեշտություն է առաջացել կիրառել գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այլ գործիքներ:

Գյուղատնտեսության բնագավառում առկա ռիսկերի կառավարման մեթոդների շարքում զարգացած տնտեսություն ունեցող երկրներում թերևս հաջողությամբ կիրառվում է գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը կամ ագրոապահովագրությունը: Ընդ որում, այն իրականացվում է ինչպես պարտադիր, այնպես էլ՝ կամավոր եղանակներով, այդ թվում նաև պետական մասնակցությամբ կամ աջակցությամբ: Այդ աջակցությունը գյուղատնտեսության

ապահովագրության իրականացման կարևորագույն նախապայմաններից է, որն իրականացվում է աշխարհի մի շարք երկրներում:

ՀՀ-ում երկար տարիներ փորձ է արվել ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համապարփակ կամ պիլոտային ծրագրեր: Սակայն ոլորտի հիմնախնդիրները, ներդրման առանձնահատկությունները, ազդեցությունը ապահովագրական և ֆինանսական շուկայի վրա ուսումնասիրվել են ոչ բավարար չափով և որակով: ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագիր ներդրվել է ընդամենը 2019 թվականի սեպտեմբերին: Մինչ այս գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման համար իրականացվել են հաշված հետազոտություններ (2014թ-ին ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» ՄԱԶԾ-ՃԿՎԲ Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար»՝ Կլեմանս Տատեն-Ժալերանի կողմից, իսկ 2017թ-ին ՀՊՏՀ Ամբերդ Մատենաշարը ներկայացրել է «Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» հաշվետվությունը), որով առաջարկել են որոշ հայեցակարգային դրույթներ:

KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերով շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը 2017 թվականից սկսած մշակել է ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր, որին մասնակցել են ներկայացուցիչներ և փորձագետներ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարությունից, ՀՀ Կենտրոնական բանկից, ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններից և այլն: Անցկացվել են մի շարք հարցազրույցներ գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ, հետազոտվել են ՀՀ-ում առկա վիճակագրական տվյալներ, կլիմայական պայմաններ, որի արդյունքում նախագծվել է պատրաստի ծրագիր: Ապահովագրության լավագույն մեխանիզմ է ընտրվել «արտադրական ծախսերի» հիման վրա ապահովագրությունը:

Արդեն իսկ կատարվող աշխատանքը ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարելի է համարել «բավարար»՝ գյուղացուն ինչ-որ մակարդակի պաշտպանվածություն և ծածկույթ տրամադրելու առումով, սակայն, այնուամենայնիվ, անհրաժեշտություն է առաջանում պատշաճ խորությամբ կատարել հետազոտություն՝ ուսումնասիրելով, թե արդյոք առաջարկվող մոդելը բավարարում է գյուղացու և ապահովագրական ընկերությունների պահանջները, գտնել մոդելի թերությունները և բացերը, և առաջարկել ավելի կատարելագործված մեխանիզմ:

Նշված կարևոր հիմնախնդիրների գիտական հետազոտման, լուծումների մշակման ու առաջադրման անհրաժեշտությունը պայմանավորում են Լ. Քոչարյանի ատենախոսության թեմայի արդիականությունը, կատարման անհրաժեշտությունը, հետազոտության առարկան, նպատակը, մեթոդաբանությունը, շարադրման կառուցվածքն ու տրամաբանությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է բացահայտել ներկայում ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական պիլոտային ծրագրի թերությունները և խնդիրները, գտնել համապատասխան կատարելագործման և բարելավման ուղիներ և մեթոդներ՝ առաջարկելով ավելի ճկուն մոդել, քան գործող՝ «արտադրական ծախսերի» հիման վրա իրականացվող մոդելն է: Նշված նպատակին հասնելու համար ձևավորվել են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար արդեն իսկ կատարված աշխատանքները, վերլուծությունները և կիրառելիությունը,
- բացահայտել մինչ այժմ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բացակայության դրդապատճառները,
- բացահայտել ներկայում ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի կիրառելիությունը, դրական և բացասական կողմերը, հիմնախնդիրները, գտնել այսօրվա ծրագրերից դուրս մնացած գյուղացիական տնտեսությունները, դրանց կարևորությունը, ինչպես նաև այդ տնտեսությունների համար մշակել համապարփակ ապահովագրության պրոդուկտներ,
- տեսականորեն հիմնավորել գյուղատնտեսության ապահովագրության առավել արդյունավետ մոդելի անհրաժեշտությունը՝ հիմնված հատուցման ամբողջականության վրա,
- գտնել գյուղատնտեսության ապահովագրության բաշխման, հաշվառման և այլ կազմակերպական գործընթացների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 142 էջ ծավալով /առանց հավելվածի/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և

առարկան, գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության ապահովագրության համակարգը եվ դերը»** գլխում քննարկվել են ՀՀ-ում գյուղատնտեսության կառուցվածքը և դերը, ռիսկերը, ինչպես նաև ապահովագրության կիրառելիությունը: Ուսումնասիրվել են գյուղատնտեսության ապահովագրության միջազգային լավագույն փորձն ու մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության մոդելը և դրա ազդեցությունը ապահովագրական շուկայի վրա»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ-ում ներդրված գյուղատնտեսության ապահովագրության համակարգը, դրա իրականացման կարգը, գնագոյացումը, պայմանները և այլն: Բացահայտվել են մի շարք խնդիրներ և բացթողումներ, որոնց լուծման համար առաջարկվել են կատարելագործման ուղիներ:

Ատենախոսության երրորդ՝ ***«ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բաշխման (վաճառքների) եղանակների գնահատումը»*** գլխում ներկայացվել են գյուղատնտեսության ապահովագրության բաշխման լավագույն եղանակները ՀՀ-ում: Մասնավորապես, քննարկվել են կոոպերատիվների դերը և ստեղծման մոտեցումները ու կիրառելիությունը, ջերմոցային տնտեսությունների ապահովագրության հնարավորությունները, նորագույն տեխնոլոգիաների կիրառելիությունը, ինչպես նաև ՀՀ-ում գործող խոշոր ձեռնարկությունների բաշխման ցանցերի օգտագործելիությունը: **«Եզրակացություն»** բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտն է ապահովագրական ընկերությունների, գյուղացիների, միջնորդների և կարգավորող մարմնի՝ ՀՀ Կենտրոնական Բանկի, ի դեմս Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության միջև փոխհարաբերությունները և դրանցից բխող հետևանքները: Որպես հետազոտության առարկա ընտրվել է գյուղատնտեսական ապահովագրության ոլորտը, իրականացման ձևերն ու կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Վերլուծության իրականացման ժամանակ օգտագործվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգերի ներդրման համար հայրենական և արտասահմանյան

հետազոտողների աշխատություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր, միկրո և մակրոտնտեսական մեկնաբանություններ, ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության համակարգի նորմատիվ ակտեր, վերլուծական նյութեր:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան որոշ երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունը կարգավորող իրավական ակտեր, ինչպես նաև ՀՀ-ում գյուղատնտեսական ցուցանիշների առավել մանրամասն վիճակագրություն՝ համաձայն ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության պաշտոնական տվյալների:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գրաֆիկական, սխեմատիկ և վերլուծության այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ և ձևակերպել հետևյալ գիտական նորույթները.

- Գնահատելով «Արտադրական ծախսերի» գյուղատնտեսության ապահովագրության մոդելը՝ առաջարկվել է ՀՀ-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրության՝ «**Բերքի ապահովագրության**» վրա հիմնված մոդելը փուլային եղանակով, ի լրումն «Արտադրական ծախսերի» մոդելի,
- Առաջարկվել է ներդնել Ջերմոցային տնտեսությունների ապահովագրության մեխանիզմ՝ գույքի ապահովագրության շրջանակներում «Բիզնեսի Ընդհատում» ռիսկի ապահովագրության ծածկույթներով,
- Առաջարկվել է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հետ զուգահեռ ՀՀ-ում ստեղծել և խթանել գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ Բաժնետիրական Ընկերության իրավական կարգավիճակով և կոոպերատիվի մասնակիցների բաժնեմասերի առկայությամբ,
- Առաջարկվել է Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներկայիս «Արտադրական ծախսերի» հիման վրա գործող մոդելի արդյունավետության բարձրացման նպատակով կատարել կոնկրետ գործավարման և այլ ծախսերի (սակագնի բեռնվածության) օպտիմալացում, ինչպես ապահովագրության մեջ, այնպես էլ վերաապահովագրության փոխանցվող հատվածի տեսակարար կշռի մեջ:
- Առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության բաշխումը իրականացնել նոր ուղղություններով, այդ թվում՝ օգտագործել Անօդաչու թռչող սարքերի հնարավորությունները ռիսկերի և վնասների գնահատման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության 2.1 պարագրաֆում ապահովագրական շուկայի վրա գյուղապահովագրության ազդեցության գնահատման շրջանակներում հեղինակը ներկայացրել է «արտադրական ծախսերի» հիման վրա ապահովագրության պիլոտային ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարիներին նախատեսվող ապահովագրության ծավալները (կանխատեսումները), սակայն դրանց վերաբերյալ հեղինակի գնահատականներն աշխատանքում բացակայում են, ինչի առկայությունը էականորեն կբարձրացներ աշխատանքի որակները:
2. Ատենախոսն աշխատանքում (նաև եզրակացություններ բաժնում) օբյեկտիվորեն անդրադառնում է ագրոապահովագրության պիլոտային ծրագրի շրջանակներում ԳԱԱԳ-ի ապահովագրավճարների 5%-ի չափով անդամավճարների վճարման աննպատակահարմարությանը և առաջարկում դրանք նվազեցնել 3%-ի, ինչպես նաև այլ ծախսերի կրճատման արդյունքում կանխատեսում շահույթ ապահովագրական ընկերությունների համար, որն էլ ենթադրում է պետական բյուջե շահութահարկի վճարում և այլն: Սակայն հետաքրքիր կլիներ, եթե հեղինակը քննարկեր առանձին մարմնի փոխարեն հիշյալ ոլորտի կանոնակարգման գործառույթներն արդեն իսկ կայացած՝ Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրոյին փոխանցելու նպատակահարմարությունը, որով զգալիորեն կկրճատվեին մի շարք ծախսեր (Բյուրոյի անդամավճարները կազմում են 1% ԱՊՊԱ վճարներից), ինչպես նաև կզսպվեր ԳԱԱԳ-ի ֆինանսավորման ռիսկը՝ ագրոապահովագրության ապահովագրավճարները նախատեսվածից քիչ հավաքագրելու դեպքում:
3. Աշխատանքի 60-րդ էջում հեղինակը մանրամասն վերլուծել է վերաապահովագրության մասնաբաժնի ազդեցությունը պիլոտային ծրագրի վրա՝ առաջարկելով դրա շրջանակներում կրճատել վերաապահովագրության փոխանցվող ծավալները, քանի որ որքան բարձր է ապահովագրողների սեփական պահումն, այնքան ծրագրի վերջնարդյունքը կլինի դրական: Սակայն այստեղ հարկ է դրսևորել բավականին զգուշավորություն, քանի որ ապահովագրության, հատկապես ագրոապահովագրության դեպքում խոշոր պատահարների հետևանքները կարող են լինել «կործանարար»:

4. Աշխատանքի 2▨3 պարագրաֆում առաջարկվում է գյուղատնտեսության ապահովարության պարտադիր եղանակով իրականացում: Թեև ատենախոսն օբյեկտիվորեն նշում է, որ յուրաքանչյուր պարտադիր ապահովագրության տեսակ լրացուցիչ «հարկ» է բնակչության համար, այնուամենայնիվ գտնում է, որ ապահովագրական շուկայի համար կապահովի երաշխավորված հավելյալ մուտքեր՝ մեջբերելով ԱՊՊԱ-ի օրինակը: Կարծում ենք, որ գյուղաբնակների համար, ովքեր հաճախ վարկային միջոցներով են հոգում օրվա հացի խնդիրը՝ սա թերևս բավականին ծանր բեռ կդառնա: Հետևաբար շատ արդյունավետ կլիներ, եթե առաջարկվեր, որպեսզի հանրապետությունում ներդրվեր ագրաապահովագրության իրականացման զանազան խրախուսման մեխանիզմներ, շուկայականից ցածր տոկոսներով վարկավորում, ապահովագրության վկայագիր ունեցողներին պետական սուբսիդավորում և այլն:
5. Գյուղացիական Կոոպերատիվների ստեղծմանը գաղափարն ընդունելով, այնուամենայնիվ հարկ է նկատել, որ գաղափարի առավելություններով հանդերձ բավարար չափով չեն ուսումնասիրվել կամ այդ մասին աշխատանքում չեն ներկայացվել օրինակ ՀՀ գյուղաբնակ բնակչության հոգեկերտվածքը (մենթալիտետը)՝ միմյանց հետ մեկ ընդհանուր միության, տվյալ դեպքում կոոպերատիվի կազմում, միավորվելու առումով: Բացի այդ, հարկ էր հաշվի առնելով նաև ՀՀ աշխարհագրական դիրքի ազդեցությունը՝ գյուղերի ունեցած հեռավորությունները, ռելեֆը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով և գիտական մակարդակով հանդերձ՝ **Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը** կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ-ում Գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ տեսական և գործնական կարևոր խնդիրներ, վերլուծության ու հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող հեղինակային մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ

ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ գլխավոր տնօրեն,
տ.գ.թ., դոցենտ

Արման Դաղունց
10 փետրվարի 2020թ.